

ԱՆՏԻՊ ԷԶԵՐ ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻՑ

ՊԵՏՐՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Հայ ականաւոր բանաստեղծ Աւետիք Խսահակեանի գրական ժառանգութեան հաւաքման ու հրատարակման ուղղութեամբ մեծ աշխատանքներ են կատարուել: Անսքող հետաքրքրութիւն է ներկայացնում յատկապէս բանաստեղծի նամականին, մասնաւորապէս Հանըութեանն անյայտ նամակները: Յայտնի է, որ նա նամակներ է գրել 1889—1957 թուականների ընթացքում, մօտ 70 տարի եւ, ինչպէս հաւաստում են հմուտ խսահակեանագէտներ Արամ եւ Արմիկ ինձիկեանները, այդ նամակների ամբողջական հրատարակութիւնը կը կազմի մի քանի հատոր: Յայսօր Վարպետի նամականուց հրատարակուել է միայն մի փոքր մասը: Անշուշտ, Խսահակեանի բոլոր նամակները չեն, որ յայտնի են. ապագայ պրատումները ի յայտ կը բերեն նոր միաւորներ, որոնք ցրուած են զանազան արիթիւններում, շատերն էլ սեփականութիւնն են անհատների: Այս իմաստով Վարպետի իւրաքանչիւր նամակի յայտնաբերումն ու հրատարակումը, ինքնըստինքեան, պատմա—մշակութային իրադարձութիւնն է եւ, ըստ ամենայնի, խրախուսելի:

Ստորեւ ընթերցողների ուշադրութեանն ենք ներկայացնում Խսահակեանի՝ նշանաւոր հայագէտ Հայկ Պէրպէրեանին (1887—1978) հասցէագրուած 5 նամակները: Այդ նամակները գրուել են Խսահակեանի կեանքի ամենաշրջադարձին պահերից մէկի ժամանակ՝ 1936ին, երբ նա արտասահմանից վերջնականապէս վերադառնում էր Հայաստան: Նամակները կարեւորագոյն տուեաներ են պարունակում բանաստեղծի կեանքի ու գործունէութեան վերաբերեալ: Այստեղ ի յայտ է գալիս մեծ բանաստեղծն իր առօրեայ հոգսերով, յոյզերով, մտուումներով, ժամանակի հասարակական կեանքի զանազան իրադարձութիւնների իր գիտարկումներով ու տպաւորապաշտ գնահատականներով:

Նամակները տպագրուում են նոյնութեամբ, անհրաժեշտ կէտաղը ական [եւ ուղղագրական – լսմբ.] միջամտութիւններով, մեր կողմից կատարուած յաւելումները առնուած են փակագերի [] մէջ:

Նամակները պահպանւում են Հայաստանի Հանրապետութեան Պարբերական Մամուլի Պետական կենտրոնական Արխիվում, Հայկ Պէրպէրեանի անձնական ֆոնդում, թիւ 508, Յուցակ 1, գործ 92:

Նրանք արտագրուած են յաջորդաբար՝ 1, 3—4, 5—6, 7 եւ 8—9 թերթերից:

Սիրելի Հայկ Պերպերեան,

Օգոստոսի 27ին Զեզ նամակ գրեցի² գրադարանիս տեղափոխման արտօնագիր – licence ստանալու համար: Բայց դեռ Զեզնից պատասխան չունեմ: Ենթադրում եմ, որ բացակայ էք Փարիզից:

Աւելորդ չեմ համարում կրկնել, որ գրադարանն կազմուած է 8 արկղներից³, բոլորը միասին կը կշռեմ 530 քիլօ, բայց բոլերի, կապերի աւելումով՝ 550 քիլօ: Տեղափոխութիւնը եւ ապահովագրական ծախքերն միասին 500 ֆրանքից աւելի [կ'արժենան]: Երեւի: Արտօնագիրը պիտի ուղարկուի Բարումի վրայ. «Հայաստանի Սովորակոմին»⁴: Ըստք Պետական Գրադարանին՝ Բարեգործականի կողմից»⁵: Երկու օրինակ արտօնագիր. մէկը ուղարկուելու է Բարում մաքսատան վրայ, միւսը՝ Երեւան գրադարանին, գրադարանի վարիչ Ս. Մարտիկեանին:

Ստամբուխս դարմանումը դեռ շարունակում է. մի 8 անգամ էլ պիտի լինի, մինչեւ Սեպտեմբերի⁶ 15ը: Զգիտեմ մինչեւ այդ օրը կը ստանա՞մ արտօնագիրս, որ արկղներս յանձնեն տրանսպորտի ընկերութեանը: Սեկնելս կախած է այդ արտօնագրից: Յետոյ, նաևրը մնկնում են շաբաթը մի անգամ եւ վաղօրօր պիտի գրուել. հերքի սպասել: Բարումի հետ ուղարկի կապ չկայ, պիտի մի քանի տեղ փոխենք նաևրը:

Այս բոլոր դժուարութիւնների վրայ աւելացաւ եւ մի ուրիշը: Նաւային ընկերութիւնները օտարմերից միայն օտար դեմքով են տոմսեր վաճառում⁶: Սենք օտար դեմք չունենք. ունեցածներս լիրա եւ, [որ] չի ընդունում:

Այս բոլորը ի նկատի ունենալով գրեցի Պ.Վ. Մալեզեանին⁷, որ բարի լինի Սեպտեմբերի⁸ ամսականս⁹ ուղարկելու հաջ, հեռագրով [ընդգծումը՝ նամակագրին – Պ.Յ.], եւ այն պայմանով, որ ինձ այստեղ ֆրանս[իական] ֆրանք վճարեն հետեւալ բանկում Banca Francese et Italiana per l'America, որ կապ ունի Roma commerciale Italiana[ինը]: Այդ բանից Փարիզ Մեծ Օպերայի մօսն է գտնում: Եթէ ուղարկեք ամսականս, որ կասկած չունեմ (որովհետեւ ստոյգ գիտեմ, որ քանի դեռ ճամքու վրայ եմ, Երեւանից կարգադրութիւն չի լինի, որ դադարեցնեք վճարումն ինձ), գրադարանիս տեղափոխման ծախքերը կը հոգամ այդ գումարից:

Խնդրում եմ փուրացնես արտօնագրի ստացումը եւ իմացնես ինձ իսկոյն, եւ աւ. Վ. Մալեզեանին նոյնապէս պարզես կացութիւնս:

Սիրով եւ բարեւներով
Զերդ Աւետիք Իսահակեան

Բ.

Վեճետիկ, 15 Սեպ[տեմբերի], 1936

Սիրելի Հայկ Պերապերեան,

Ծնորհակալութեամբ ստացայ նամակ⁹ և արտօնագիրը, նորից շնորհակալութիւն:

Հիմա էլ գրադուած եմ իտալական կառավարութիւնից արտօնութիւն ստանալու՝ երկրից դուրս ապրանք ուղարկելու համար: Դա՝ [2 անընթ.] մի երկու օր էլ այդ կը քաշէ:

Ըկարդացանք երեկուայ մեկնող նաւով գնալ, որովհետեւ թէ՝ դարմանում է շարունակում (թերեւս մի 8 օր էլ) և թէ՝ գրքերի և իրերի պատմութիւնը եւ թէ՝ օտար դեկազի հարցը: Յաջորդ նաւը կը մեկնի Սեպտեմբերի 23ին, տոմսերը վաճառուած են. տոմսեր կարելի է գտնել միայն Սեպտեմբերի 30ի նախն:

Ծա՛տ տառապեցի, թէ՝ հիմանդրութեանս այստառով, թէ՝ գրքերի և գոյրերի եւ թէ՝ այդ տոմսերի, դեկազայի, արտօնագրերի: Ես գիտոցիր որ նաւերը ուղղ Բաքում չեն գնում, այսինքն ուղղակի, այլ նաւից նաև այսի փոխունքը Աքենք. Կ. Պոլիս, Կոստանցա...

Լաւագոյն քանը այն եղաւ այս տառապանքներին մէջ, որ հիմանդրութիւնս անցաւ, եւ մէկ էլ՝ Պարբենոննը¹⁰ պիտի տեսնեմ, գոնե մի անգամ:

Սիրելի Հայկ, երկրորդ նամակիս մէջ գրել էի, որ Սեպտեմբերի ամսականս ուղարկէիք: Պատուիրած նամակն էլ նոյն իմաստով գրել էի պ. Վ. Մալեկեանին, որ ինչպէս գրում եք, բացակայ է: Եթէ վերադարձել է, կը խնդրէի արագացնէիք առաքում: Եթէ ինչ-ինչ նկատառումներով կը դժուարանան վճարել ամսարշակս, խնդրում եմ հեռագրեք Երևան, հարցեցէք կառավարութեանը, որ Խասակեանը խնդրում է Սեպտեմբերի ամսականը Վեճետիկից, ծամբու վրայից: Չարժէ ի հարկէ, սար ու ծոր ընկնել: Խնդրից շա՞տ պարզ է: Գրքերի առաքումը, յարակից ծախսերը եւ ակամայիցս իմ դեգերելը Վեճետիկ, շա՞տ ներգործեցին իմ նիհար միջոցների վկայ:

Զերմագին բարեւմերով: Կը խնդրէի շուտով մի երկտողով իմացնել ինձ:

Զերդ Աւետիք Խսահակեան

գ.

Վեճետիկ, 26 Սեպտեմբերի, 1936

Սիրելի Հայկ,

Ստացել եմ նամակներդ եւ խորապէս շնորհակալ եմ քո խսկական բարեկամական վերաբերմունքի համար: Չեմ մոռանայ: Բաղձանք ես յայտնում, որ ինչքան հնարատոր է՝ ուշ գնամ երկիր եւ զգուշ լինեմ: Վերջինը հասկանում

եմ, բնական է, որ մարդ շրջահայեաց եւ զգուշ պիտի լինի՝ գործի իսկ յաջողութեան համար: Զգուշութիւնը անբարոյական երեսոյք չէ. ծագում է – արդինք է փորձառութեան եւ խելքի: Բայց «ուշ գնաւալը», համաձայն չեմ: Չատ եմ ցաւում, որ հակառակ իմ կամքիս այսպէս եղաւ: Իմ ուշացման ամեն մի ժամը պատճառարանուած է եւ յոդմտանքի ընդդէմ քայլ չեմ արած¹¹: Լորջ հիւանդ էի, եւ այլով. Պարտիգեանը փրկեց ինձ¹²: Եթէ ուշացնէի դարմանումը ժամը կացութեան պիտի մատնուի՛ ստամորսի դժուարին հիւանդութիւն: Հարկ պիտի լիներ վիրաբուժական գործողութեան, բարդութիւններ եւ Երեւանում...

3-4 տարի տառապում էի եւ Փարիզում չին հասկանում:

Ես կ'ուզէի վաղոյն Երեւան լինել¹³, թերեւս պէտք գայի եւ անվախօրէն: Երբէք չեմ վախեցել: Կը կատարէի իմ քաղաքացիական պարտքը հայրենիքիս հանդէս: Այժմ էլ երբ հասնեմ եւ հարկ եղաւ՝ չեմ ընկրկի: Համոզուած եղիր՝ ինչ որ անեմ Հայաստանում, արած կը լինեմ արիութեամբ, բարոյականութեամբ, յոդմտանքով, միմիայն Հայրենիքի գերազոյն շահերի համար:

Սիրելի Հայկ, վերջապէս, հիմա ամեն ինչ պատրաստ է: Առողջութիւնս լա է, Սեպտեմբերի 30ին նաև կ'առնենք դեպի Արէնք, այնտեղից էլ Կ. Պոյիս, Բարում: Հոկտեմբերի վերջերին կը լինեմք Երեւան: Ապարանքի կը կատարեմ, ինչ որ ասել ես, նորագրել եմ: Երեւանից կը գրեմ թեզ:

Մի շաբար առաջ, երբ ստացայ 1500 ֆրանք, գրեցի պ. Վ. Մալէզեանին: Եթէ այդ նամակս ծերզ անցաւ, կը տեսնէիր, թէ ինչայսի՞ քաղաքավարութեամբ հասկացրել եմ պարոն վարիչին, որ աւելորդ մտահոգութեան մատնուելու տեղիք չուներ, որովհետեւ ես իմ իրաւունքն էի, որ խնդրում էի: Երեւանը ինձ չի կանչել, ես եմ գնում իմ կամքով, եւ երբ ուզենամ, այն օրը կը մեկնեմ եւ որտեղից էլ որ ուզենամ... վերջապէս: Յանցաւորը ես եմ, որ իմ պահանջին այնպիսի ծեւ էի տուել, որպէս թէ շնորհ է, որ կը խնդրեմ պ. վարիչից:

Հոգեբանութիւն, նորութիւն շհասկացող մարդիկ են:

Նորից շնորհակալութիւն:

Զերմագին բարեւներով

մնամ սրտով Զերդ՝
Աւետիք Իսահակեան

Դ.

Վենետիկ, 3.X.1936

Սիրելի Հայկ Պերպէրեան,

Պիտի զարմանաք, անշուշտ, որ տակալին Վենետիկում եմ: Ամէն քան պատրաստ էր՝ նաւը, գոյքերը յանձնուած... Բայց Միլանի կոնսուլատի անփութութեան պատճառով, ստիպուած եղանք մի շաբար յետաձգելու մեկնումը: Կը մեկնեմք 7 Հոկտեմբերին]: Կարծում եմ, որ այլեւս արգելքներ չեն ծագի:

Արդ, եթէ Երեւանից մի որեւէ կարգադրութիւն ստացած լինէք ինձ համար, կը խնդրէի հեռագրով ինձ իմաց տալ:

Զերմագին բարեւներով
Զերդ Աւետիք Իսահակեան

Սիրելի Հայկ Պերպէրեան,

Նամակս գրում եմ Ռումանիայի նախահանգստից, որ մնալու ենք ամբողջ 30 ժամ: Հիմա այստեղ ձմեռ է, ծին և ցուրտ, և ծովը փորբուշայոյց: Պարագաներն այնպէս դասաւորուեցին, որ ոչ աշնան հասաւ Հայրենիք զնալս:

Արդեն 13 օր է ծովերի վրայ ենք՝ սկսած Արէնքից, որ ասե՞ս չեղանք՝ Յունական կղզիներ, Զմիկան, Վոլո, Սալոնիկ, Ալեքսանդրապոլիս, Ստամբուլ, Վառնա, սրանից յետոյ էլ Օդեսա, ապա Բարպում: Տակալին ճգիշեր ունենք ծովի վրայ անցկացնելու, իսկական մի ամբողջ ողիսական:

Սիրելի Հայկ, Վեճետիկից չկարողացայ Ձեզ նամակ գրել, այնքան գրաղուած է: Արէնքից մի պոստքարտ գրեցի 300 տոլարի գումար ստացած լինելու իմացնելու համար, բայց չուզեցայ երկար գրել, որովհետեւ Յունաստանում, դիկտատորայի շնորհի, շա՞տ խիստ գրաբնութիւն կայ, գրաբնենիչը հայ է (հայերէնի համար) եւ դաշնակցական մէկը, որ, ուղարկի շար ոզի է հանդիսացել ոչ-դաշնակցական հայերի գլխին եւ լրտես ներ է կատարում: Նամակների իմաստը խեղաքիրում է եւ նամակների բովանդակութիւնը դաշնակցական շրջանների սեփականութիւնը դարձնում:

Ուզում էի գրել, թէ պ. Վ. Մալեզեանի Երեւան տուած հեռագիրը, թէ կարելի՞ է ամսարշակս Վճարել կառավարութիւնը համաձայնութիւն է տուել եւ կարգադրել միանուազ տալ 400 տոլար: Ես լոր չունեմ այդ մասին, Արէնք նամակ առայ որդուց, որ բացատրել էր Եղելութիւնը: Եթէ պ. Մալեզեանը չի եռագրեր, այդ անակնեալ տեղի չէր ունենայ: Այդ տեղից ինչ մորալ ուզում է, բռնի հանէ պարոն Վարիչ-քարտուղարը: Ռուսն ասում է այդ առջի՞ չկայ չարիք առանց բարիքի:

Սիրելի ընկեր Հայկ, Արէնք մնացի շորս շաբաթ, առաջին օրերը շա՞տ քափառեցի, շա՞տ տեղ եղայ, շա՞տ բան տեսայ¹⁴: Ամբողջապէս շրջապատւած էի հայերով, ծանօթ-անձանօթ, թէյասեղան կազմակերպեցին, բայց կառավարութիւնը արգելեց դաշնակցականների ցուցմունքների վրայ, որպէս թէ եւ համայնավար են եւ եկել են այրովագանից: Հակառակի պէս այդ օրերը ՀՕԿի¹⁵ ընդհանուր (մասնածիւների) ժողով էր, որ հաւաքուած էին Յունաստանից շատ ՀՕԿիստներ: Նոյնիսկ արգիլեցին յոյն թերթերի մէջ իմ մասին գրել, զայռու եւ մէկնելու մասին: Դաշնակցականները իրենց նոր Օրթերքով¹⁶ պարզապէս լրտեսի գործեր են կատարում, ամօ՞ք:

Դժբախտաբար, քափառումներիս հետեւանքով ծանր տևսակի հարբուխ (կրիփ) ունեցայ՝ կոկորդի եւ քի բռբորում, նոյնիսկ վիրաբուժական թերթի գործողութիւն ունեցայ: Գնում ենք դանդաղ, մի քափառող, բեռներ ընդունող իտալական նաւով (ուրիշ նաև չկայ Բարպում գնացող): Ժամերս անցնում են ընթերցումով, գրելով և դիտելով:

Եթէ տարեկը ուզենայ, իին խօսրով, եթէ Աստուած կամենայ, Դեկտեմբերի 1ին կը հասնենք Բարպում: Հայ[աստանի] կառավարութիւնը առանձին

վագոն է ուղարկելու մեզ, գրքերը եւ մեր իրերը ընդունելու: Որդիս¹⁷ եւ որիշները դիմատրելու են մեզ¹⁸: Յաջորդ նամակը բախտ կ'ունենամ Երեւանից գրելու, որտեղից յոյս ունեմ լաւ բաներ հաղորդելու Ձեզ¹⁹:

Սնաս բարեաւ, սիրելի ընկեր Հայկ: Յատկապէս շատ եւ շատ շնորհակալ եմ քեզնից եւ լաւ զգացումների համար, որ յայտ ես քերել իմ նկատմամբ միշտ:

Սիրով Ձերդ անկեղծ
Աւետիք Խսահակեան

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տես՝ **Աւետիք Խսահակեանի Նամակները**, Մատենաշար Յուսաբերի, Գահիրէ, 1959.
- Արամ Խնճիկեան, **Աւետիք Խսահակեան, Երկերի Ժողովածու վեց հայորով**, հասոր 6, Երևան, 1979, էջ 396, Երևան, 1977:
2. Հայկ Պերպէտեանի բողոքի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ այդ նամակը, գոնեւ մեզ յայտնի նիւթերի շրջանակում, չի պահպանուել:
3. Նոյն օրերին՝ Հոկտեմբերի 13ին, որդում՝ Վիգեն Խսահակեանին գրած նամակում Խսահակեանը կրկին հայատում է, թէ իրօք գրադարանը կազմուած է եղել ութ արկդեմերից, տես՝ **Ժողովածու**, էջ 329:
4. Այսինքն՝ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը, որ այն ատեն կոչում էր **Ժողովրդական Կոմիսարների Խորհրդություն**:
5. Հայկական Բարեգործական Ընդհանուր Սիրութեան դեկավարութիւնը նման քայլի էր դիմել՝ խորհրդակցելով Հայաստանի կառավարութեան նախագահ Սահակ Տէր Գարքիեւեանի հետ (մինչեւ վերջինիս ձերբակալութիւնը), որի շնորհի մաքսային անհրաժեշտ վճարումները կիսով չափ կրճատուելով՝ թերեւացնում էին նաև Խսահակեանի անհնական ծախսերը:
6. Այսինքն՝ օտար դրամանիշով:
7. Խօսքը գրող, բարգմանիշ, ազգային-հասարակական գրոծիչ Վահան Մալէզեանի (1871–1966) մասին է, որն այդ տարիներին վարում էր ՀՔԸ Սիրութեան ընդհանուր վարչչ-քարտուղարի պաշտօնը: Արդարեւ, Զարեհ Նուապարի ՀՔԸ նախագահութեան շրջանոմ (1932–1940) Սիրութեան համագարութային աշխատանքները իմականում գլխաւորում էր Սալեզեանը:
8. 1930 րուականից սկսած, երբ Խսահակեանը հաստատուեց Փարիզում, Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը իրաքանչիր ամիս կանոնադրապէս նրան վճարում էր կենսաքշակ՝ շորջ 500 ֆրանքի սահմաններում, որը, Սահակ Տէր Գարքիեւեանի հետ պայմանաւորուածութեան համածայն, բանատեղծին էր տրում ՀՔԸ Փարիզի կենտրոնական գրասենեակից: Այդ գումարը մի կերպ էր բարարում Խսահակեանների ընտանիքի կարիքները. այն ակներէ է դատմամ 1932թ. Յունիսի 6ին Նիկողայոս Խսահակեանին յղուած նամակից. «Փողի կողմից շատ ունենաք, որովհետեւ կառավարութիւնից (Խորհրդային Հայաստանի – Պ.Յ.) ստացած իմ կենսաքշակը չի բաւականում. կեանքը բանկ է» տես՝ **Ժողովածու**, էջ 289:
9. Պերպէտեանի այդ նամակը մեզ անյայտ է. Խսահակեանի բողոքի նիւթերում այն բացակայում է: Սոյն եւ համանման այլ փաստեր, ցոյց են տալիս, որ բանաստեղծի նամականին զգալի կորուստներ է ունեցել մինչեւ Գրականութեան եւ Արուեստի

Թանգարանում հանգրուանելլը:

10. Պարքենոն – իմաստութեան աստուածուիի Աթենային նուիրուած տաճար. կառուցուել է Ք.ա. 447–432ին, Արէնքում:
11. Ակնարկուն է իր զբաղմունքներին ՀՕԿում որպէս փոխախազակի: Բացի այդ, հսահակեանը եղել է ՀՔԸՄի և ՀՕԿի համատեղ կազմակերպած բազմաթիւ յանձնաժողովների անդամ, Ներգաղթի Ֆրանշիայի Յանձնաժողովի Կենտրոնական Գործադիր Մարմնի փոխախազակի: ՀՕԿ ամսագրի խմբագրական կազմի անդամ եւ այլն:
12. Վիզգէն Խսահակեանին ուղղուած նամակում եւս շեշտում է այս իրողութիւնը. «պրոֆեսոր Պարտիզեանը կարգին բժշկեց, իհման շաւ լաւ են». տես՝ **Ժողովածու**, էջ 328:
13. Դեռևս 1930 թ. Դեկտեմբերի 30ին Գարեզին Լեռնեանին յղուած նամակում բանաստեղծը յոյն էր յայտնում, թէ «1931 թուի ընթացքում կը վերադառնամ Հայաստան: Փարիզը լաւ է, բայց Հայրենիքը ամէն տեղից լաւ է: Լսագոյնն է»: տես՝ **Ժողովածու**, էջ 286: Նոյնը՝ 1931 թ. Հոկտեմբերին գրած նամակներից մէկում. «Ես, երեսի այս վերջին ծմբոն է, որ սիսի անցկացնեմ Երոպայում: Գարնանը [1932թ. – Պ.Յ.] կը մէկնեմ Հայաստան»: տես՝ **Ժողովածու**, էջ 287:
14. Արէնքեան անշնչելի տպատրութիւնների մասին բանաստեղծը վաս ու կենդանի գոյներով ներկայացրել է իր Յիշարակարանում: տես՝ **Յիշարակարան**, Երևան, 1977, էջ 406–418:
15. ՀՕԿ – Հայաստանի օգնութեան Կոմիտէ:
16. **Նոր Օր՝** յունահայ ազգային–գրական, քաղաքական օրաթերթ (1923–1940, 1944):
17. Նկատի ունի Վիզգէն Խսահակեանին, որ Երեւանում էր արդէն:
18. Խսահակեանը Երեւան է ժամանել 1936թ. Դեկտեմբերի 5ին. տես՝ **Խորհրդային Հայաստան** օրաթերթ, 6 Դեկտեմբեր, 1936, № 281: Բանաստեղծի Երեւանեան ընդունելութեան մասին հետաքրքրական են Լ. Հախվերտեանի յուշերը. տես՝ Լեւոն Հախվերտեան, **Վարպետը**, Երեւան, 1990, էջ 169–171:
19. Ենթադրելի է, որ Խսահակեանը սկամայ չի կատարել խոստումը: Պերպէրեանի քոջնում այդպիսի նամակ չկայ: Խսկ Խսահակեանի բոյօնում Պերպէրեանից նրան ուղղուած միայն մի նամակ կայ, այն էլ գրուած 1949 թուականին. տես՝ Շ. Չարենցի Անուան Գրականութեան և Արուեստի Թանգարան, Արխիվային բաժին, ֆոնդ 61, II բաժին, № 1590:

AVETIC ISSAHAKIAN'S LETTERS
TO HAIK PERPERIAN
(Summary)

PETROS HOVHANNISIAN

Five letters of the renowned Armenian poet, Avetik Issahakian (1875-1957) written between 7 September and 26 November 1936 are published here.

After long discussions with the Soviet Armenian authorities, Issahakian ended his self-imposed exile to Europe and returned home for good in late 1936. On his way back home, Issahakian sent these letters from Venice and Costanca to the Armenologist Haik Perperian, shedding light on the final stages of his return, the procedural details, his encounters in Greece, and the hassle of such a journey.